# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության  Լոռու մարզի Լեռնավան համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ.Լեռնավան, Հեռ. (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԻՆ**

N 35
*06 ապրիլ 2017թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ենրկայացնում Լեռնավան համայնքի ղեկավարի թիվ 09 որոշումը և կարգադրություն թիվ 01-ը

Առդիր 2 թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Է. Սարգսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 09

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ/ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գագիկ Պողոսյանի 2017 թվականի մարտի 29-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լեռնավան համայնքի 12 փողոց 12 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Գագիկ Պողոսյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2017 թվականի 1-ին եռամսյակի համար:

2. Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
22, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

31 ՄԱՐՏԻ 2017թվականի N 01

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի,1-ին մասի 24-րդ կետով «Իրավական Ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի,72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի N 05-Ա որոշմամ

*ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ*

1. Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավման,պատերազմի վետերանների սոցիլական խնդիրների լուծման, հաշմանդամների,կերակրողին կորցրած ընտանիքների,սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Ս. Վարդանյան -համայնքի ղեկավարի տեղակալ,հանձնաժողովի նախագահ
2. Է. Սարգսյան -համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ,հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Դ. Հարությունյան -ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար
4. Ռ. Բեգլարյան -ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
5. Ս. Այվազյան -ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
6. Հ. Մարգարյան -համայնքի բնակիչ,հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
7. Հ. Չալիկյան -համայնքի բնակիչ,հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնավան համայնքի ղեկավարի 2014 թվականի դեկտեմբերի 10-ի «Հանձնաժողով կազմելու մասին» N 9-Ա կարգադրությունը:

3. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ